ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/49 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«12» «ապրիլի» 2023թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ՝ Վահե Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
վարչատնտեսական բաժնի պետ՝ Լևոն Մանասարյան

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
նյութատեխնիկական ապահովման բաժնի ավագ մասնագետ՝ Մարտին Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների
կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/49» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով էլեկտրոնային ձևով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ**

1.1 «**ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/49**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. ապրիլի 10-ին ժամը 10:00-ին: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ. ապրիլի 11-ին Ժամը 10:00-10:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	«ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ	+374 93 66 63 30	02535853
2	Բրիդջ ՍՊԸ	+374 94 57 32 00	00143175

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Առաջին տեղ զբաղեցրած «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

3.1.1 գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ ծածկագիրը չի համապատասխանում հրավերի ծածկագրին, Պատվիրատուի անվանումը սխալ է լրացված, բացակայում է էլեկտրոնային փոստի հասցեն, ռուսերեն լեզվով անվանումը ռուսերեն չի լրացված, դիմում-հայտարարության չորրորդ պարբերության 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին /բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը/ և բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը.

3.1.2 բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ կայքէջի հղումը /հրավերի հավելված 1.3/.

3.1.3 առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը լրացված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **« ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/49» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին, որպեսզի սահմանված ժամկետում շտկի նշված անհամապատասխանությունները:

4.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի ապրիլի 14-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Վահե Խաչատրյան	
Անդամներ՝	Լևոն Մանասարյան	
	Մարտին Մարգարյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	